ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17.02.2012թ.

ք.Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 96-ը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, Արարատի մարզի ՋՕԸ-ների տնօրեններ, առողջապահական հիմնարկների տնօրեններ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Մարզպետի 2011 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն:

/Զեկ.՝ ՀՀ Արարատի մարզպետ Է. Բարսեղյան/

2. Մարզի համայնքների 2011 թվականի տարեկան բյուջեների կատարման և 2012 թվականի համայնքների բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2011 թվականի նկատմամբ:

/Զեկ.՝ ֆինանսական և սոցիալ-տնտես. զարգ.

վարչության պետ Գ. Եղիազարյան/

3. Գարնան գյուղատնտեսական և ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների մասին:

/Զեկ.՝ գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ Տ. Վիրաբյան/

Այլ հարցեր.

1. Հայկական ակնաբուժության նախագիծ բարեգործական հիմնադրամի ,,Լույս հայի աչքերին,, ծրագրի կողմից Արարատի մարզում 2012 թ. մարտ-մայիս ամիսներին կատարվող աշխատանքների մասին:

/Առողջապ. և սոցիալական ապահովության

վարչության պետ՝ Գ. Ավետիսյան/

2. ՀՀ առողջապահության նախարարի թիվ 2517-Ա հրամանի մասին:

/Առողջապ. և սոցիալական ապահովության

վարչության պետ՝ Գ. Ավետիսյան/

3. Տեղական ինքնակառավարման մասին օրենքում կատարված փոփոխությունների մասին:

/Իրավաբանական բաժնի պետ՝ Վ. Գրիգորյան/

4. ,,Իմ տաղանդավոր ընտանիքը,, նոր միջազգային հեռուստանախագծի վերաբերյալ;

/Տեղ. և հասարակ. հետ կապերի բաժնի պետ՝ Գ. Խաչատրյան/

1. Լսեցին՝

ՀՀ Արարատի մարզպետ Է. Բարսեղյանի 2011թվականի գործնեության և մարզի սոցիալ- տնտեսական իրավիճակի մասին հաշվետվությունը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝

Արտաշատի քաղաքապետ Գ. Մուրադյանը,Հովտաշատ համայնքի ղեկավար Ս. Անդրեասյանը, Եղեգնավան համայնքի ղեկավար Հ. Ղազարյանը, Այգեստան համայնքի ղեկավար Ս. Հովսեփյանը

Հանձնարարվեց՝

Մարզպետի տեղակալ Կ. Հակոբյանին՝

. ներկայացնել տեղեկատվություն մարզում թունաքիմիկատների վաճառք իրականացնող կազմակերպությունների լիցենզիաների առկայություն վերաբերյալ ,

Գյուղատնտեսությանև բնապահպանության վարչության պետ Տ. Վիրաբյանին՝

. անհրաժեշտ վերահսկողություն իրականացնել ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների նկատմամբ,

. 3 օրվա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն՝ ոռոգման բնագավառում առկա և առաջացող հիմնախնդիրներին հրատապ լուծում տալու համար.

. գործուն աջակցություն ցուցաբերել անասնաբուժական ծառայություններին՝ ժամանակին և արդյունավետ կազմակերպելու կանխարգելիչ ու հակահամաճարակային միջոցառումները,

. դիզելային վառելանյութի պահանջարկի և գումարների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

Մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանին՝

. ներկայացնել համայնքներում խոշոր հարկեր չվճարողների ցուցակ:

Իրավաբանական բաժնի պետ Վ. Գրիգորյանին՝

. 3 օրյա ժամկետում շրջաբերական ուղարկել համայնքների ղեկավարներին << ''Տեղական ինքնակառավարման մասին'' օրենքում կատարված փոփոխությունների մասին:

2 . Լսեցին՝

Մարզի համայնքների 2011 թվականի տարեկան բյուջեների կատարման և 2012 թվականի համայնքների բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2011 թվականի նկատմամբ:

/Զեկ.՝ ֆինանսական և սոցիալ-տնտես. զարգ. վարչության պետ Գ. Եղիազարյան/

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Է. Բարսեղյանը:

3. Լսեցին

Գարնան գյուղատնտեսական և ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների մասին:

/Զեկ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ. Վիրաբյան/

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Է. Բարսեղյանը :

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Է. Բարսեղյանը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ